

Նպատակ

Երեխայի ծննդյան դեպքում գործող հիփոթեքային վարկ ունեցող ընտանիքներին վարկի մայր գումարի մարման նպատակով դրամական աջակցության տրամադրում

Դրամական աջակցության չափ

1) 1-ին կամ 2-րդ երեխայի ծննդյան դեպքում

Երևան քաղաքում գնված բնակելի անշարժ գույքի համար կազմում է

- մնացորդային մայր գումարի 5%, սակայն ոչ ավել, քան 500 000 դրամ, եթե դիմողի տարիքը գերազանցում է 25 տարին,
- մնացորդային մայր գումարի 8%, սակայն ոչ ավել, քան 1 500 000 դրամ, եթե դիմողի տարիքը չի գերազանցում 25 տարին,

ՀՀ մարզերում գնված բնակելի անշարժ գույքի համար կազմում է

- մնացորդային մայր գումարի 10%, սակայն ոչ ավել, քան 500 000 դրամ, եթե դիմողի տարիքը գերազանցում է 25 տարին,
- մնացորդային մայր գումարի 15%, սակայն ոչ ավել, քան 1 500 000 դրամ, եթե դիմողի տարիքը չի գերազանցում 25 տարին,

2) 3-րդ և հաջորդ երեխայի ծննդյան դեպքում,

Երևան քաղաքում գնված բնակելի անշարժ գույքի համար կազմում է

- մնացորդային մայր գումարի 25%, սակայն ոչ ավել, քան 2 000 000 դրամ, եթե դիմողի տարիքը գերազանցում է 25 տարին,
- մնացորդային մայր գումարի 50%, սակայն ոչ ավել, քան 4 000 000 դրամ, եթե դիմողի տարիքը չի գերազանցում 25 տարին

ՀՀ մարզերում գնված բնակելի անշարժ գույքի համար կազմում է

- մնացորդային մայր գումարի 35%, սակայն ոչ ավել, քան 2 000 000 դրամ, եթե դիմողի տարիքը գերազանցում է 25 տարին,
- մնացորդային մայր գումարի 70%, սակայն ոչ ավել, քան 4 000 000 դրամ, եթե դիմողի տարիքը չի գերազանցում 25 տարին:

Հիմնական պայմաններ

- 1) երեխան ծնվել է 2020 թվականի 01.07.2020թ. հետո,
- 2) վարկառուն առնվազն 12 ամիս կատարել է տվյալ հիփոթեքային վարկի գծով մարումներ, և վերջին 12 ամիսների ընթացքում ուշացած օրերի ընդհանուր քանակը չի գերազանցում 30 օրացուցային օրը, անշարժ գույքի գնահատված և շուկայական արժեքը չի գերազանցում 30 մլն դրամը, իսկ 3-րդ և հաջորդ երեխայի դեպքում նշված սահմանաչափն ավելացվում է ևս 5 մլն դրամով:

Աջակցություն ստանալու կարգը

- 1) Բանկի աշխատակիցը 1 աշխատանքային օրվա ընթացքում ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն (ԱՄՆ) է ներկայացնում հայտը,
- 2) ԱՄՆ կողմից աջակցության տրամադրման/մերժման մասին գրությունն ուղարկվում է և՛ Բանկին, և՛ վարկառուին,
- 3) տրամադրման դրական որոշման դեպքում ԱՄՆ կողմից գումարը փոխանցվում է Բանկում բացված հատուկ հաշվին, որն ուղղվում է վարկի մայր գումարի մնացորդային գումարի մարմանը: